ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

11 նոյեմբերի 2021թ. թիվ 1548

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 7 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 7-րդ մասի 1-ին կետով սահմանված դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Լոռու մարզպետարանի կարիքների համար 2022 թվականին իրականացվելիք ապրանքների և ծառայությունների գնման մրցակցային ընթացակարգերի հայտերը գնահատելու նպատակով ստեղծել գնահատող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ, գնումների համակարգող Դ. Թամարյանին:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2015 թվականի հունվարի 27-ի «Գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 7 հրամանը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

12/11/2021

X

ՀԵՂԻՆԵ ՀԱԼԻՎՈՐՅԱՆ

Հ.ՀԱԼԻՎՈՐՅԱՆ

2021թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետարանի
գլխավոր քարտուղարի
2021թ. նոյեմբերի 11-ի
թիվ 1548 հրամանի

Կ Ա Զ Մ

ՀՀ Լոռու մարզպետարանի կարիքների համար 2022 թվականին իրականացվելիք ապրանքների և ծառայությունների գնման մրցակցային ընթացակարգերի հայտերը գնահատելու նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

Մ. Դալլաքյան - հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ.

Ն. Ասրյան - ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

Ա. Բեջանյան - ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ

Լ. Պապյան - ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ

Ժ. Գրիգորյան - ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

12/11/2021

X

ՀԵՂԻՆԵ ՀԱԼԻՎՈՐՅԱՆ

Հ.ՀԱԼԻՎՈՐՅԱՆ